

ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԼԵՋՎՈՒՄ ԵՎ ԽՈՍՔՈՒՄ

ՌՈՒԱՆԻ ԱՎՈՑԱՆ

Լեզու-խոսք դիստոմիան, որի արժեքը սովորաբար սահմանափակվում է լեզվաբանության շրջանակներով, փիլիսոփայական վերլուծության դեպքում լեզվական նշանակության բնույթի վերաբերյալ լրացուցիչ նյութ կարող է տալ: Զի կարելի ասել, թե լեզվի փիլիսոփաները ուշադրություն չեն դարձրել վերոհիշյալ դիստոմիային: Բառի նշանակության դիտարկումը լեզվի գործողության մեջ լեզվաբանական պոզիտիվիստներին հանգեցնում է դրա նոմինալիստական մեկնաբանությանը: Որպես բնորոշ օրինակ վկայակոչենք Լ. Վիտգենշտեյնի «Կիրառության» տեսությունը: Լեզվի աշխատանքի հանգամանալի ուսումնասիրությունը նրա կոնկրետ, իրադրական գործածություններում՝ կապված նպատակային գործունեության տարբեր խնդիրների հետ, Լ. Վիտգենշտեյնին հանգեցնում է այն հետևության, թե բառի նշանակությունը «ներապիրառությունն է լեզվում»¹: Նույնպիսի հետևության են հանգել նաև Զ. Ռայլը², Ջ. Օստինը³ և լեզվաբանական վերլուծության մյուս ներկայացուցիչները, որոնց հատուկ է լեզվի ըմբռնումը լոկ դրա կոնկրետ-իրադրական, անհատական արտահայտություններում: Նրանք, ելնելով փիլիսոփայական նոմինալիզմի դիրքերից, հերքում են լեզվի՝ որպես ընդհանուր համակարգի ըմբռնումը:

Լեզվի «աշխատանքի» էմպիրիկ վերլուծության շնորհիվ բացահայտվել են նշանակության կոնկրետ արտահայտությունները՝ նշանակությունը որպես առարկա, մտապատկեր, հարաբերություն և այլն: Սակայն նշանակության կոնկրետ դեպքերի բացահայտումը լեզվաբանական էմպիրիզմի կողմից, որպես կանոն, տեղի է ունեցել ի վնաս նրա ընդհանրական և անփոփոխակ ըմբռնման:

Լեզվական նշանակության պրոբլեմի հետազոտությանը նվիրված սովետական փիլիսոփայական գրականության մեջ նշանակության կոնկրետ-իրադրական բնույթի ուսումնասիրությանը նվազ ուշադրություն է հատկացվել: Լեզվական նշանակության ընդհանուր-փիլիսոփայական ըմբռնումը մշակելիս գլխավոր մտահոգությունը նշանակության հանգեցումն է գերազանցապես ինչ-որ միանշանակ, ընդհանուր-լեզվական իրողության. ոմանց համար դա հասկացությունն է, մյուսների համար՝ հարաբերությունը, երրորդների համար պարզապես արտացոլումը և այլն: Այստեղ նկատելի է ընդհանուր մի միտում՝ բարձրացնել նշանակության առանձին, կոնկրետ տեսակներն ընդհանուր-լեզվական կատեգորիալ աստիճանի: Կարելի է, այնուամենայնիվ, նշել առանձին փիլիսոփայական մոտեցումներ, որոնք ձգտում են հաշվի առ-

¹ L. Wittgenstein, Philosophical Investigations. Basil Blackwell. Oxford, 1968, p. 20.

² G. Ryle, The Theory of Meaning. („Philosophy and Ordinary Language“. Urbana, 1963, p. 148).

³ J. Austin, The Meaning of a Word. („Philosophy and Ordinary Language“, p. 3).

ենը լեզվական նշանակության տարբերակված ըմբռնման անհրաժեշտությունը, սակայն նման փորձերը, ցավոք, հազվադեպ են⁴։

Նախքան քննման ենթակա բուն խնդրին անցնելը՝ նպատակահարմար է նշանակությունը լեզվում երկփեղկել իմաստային (բառիմաստի և ասույթի) ու բուն լեզվական կամ համակարգային նշանակության (բառակազմական և շարահյուսական)։ Եթե լեզվի իմաստային նշանակությունը պատճառակցված է արտալեզվական գործոններով, ապա քերականական կամ կառուցվածքային նշանակությունը կապված է տվյալ լեզվի կոնստրուկտիվ առանձնահատկությունների հետ և բխում է դրա կառուցվածքից։

Ըստ քերականական նշանակությունների լեզուն և խոսքը առաջին հայացքից չեն տարբերվում։ Այն, ինչ սովորաբար է լեզվում որպես խոսքի կառուցման սկզբունք, բաղված է իրական խոսքային գործունեությունից։ Լեզուն, որպես խոսքային ասույթների սերման իդեալական մոդել, որոշ իմաստով նույնական է քերականությանը՝ բառեր և նախադասություններ կազմելու կանոնների ամբողջությանը, որոնք հաստատուն են ինչպես լեզվում, այնպես էլ խոսքում։ Եթե լեզուն իրենից ներկայացնում է նշանների իդեալական համակարգ, որն օժտված է կառուցվածքայնությամբ և լեզվական նոր ձևեր սերելու ունակությամբ, ապա դա տեղի է ունենում հենց քերականական նշանակությունների շնորհիվ, որոնք հաստատուն են հաղորդող բովանդակության նկատմամբ։ Լեզուն է այն պատճառով, որ կազմավորման և վերակազմավորման կանոնները նրանում գործածվում են շարունակաբար՝ արտաքին և սուբյեկտիվ գործոններից միանգամայն անկախ։ Դա, հավանաբար, բացատրվում է նրանով, որ լեզուն փոփոխությունների հանդեպ դրսևորում է նկատելի պահպանողականություն հենց կառուցվածքային քերականական պլանում։ Այնուամենայնիվ, փոխվում են նաև լեզվի կառուցվածքը և քերականական իմաստները։ Դա պետք է հասկանալ ոչ այլ կերպ, քան ակտուալ խոսքային գործածությունների քերականական իմաստների փոփոխությունների արտացոլում։ Լեզուն զարգանում է գործածության հետևանքով։ Որքան լայն է տվյալ լեզուն գործածողների շրջանակը, այնքան մեծ է նրա փոփոխության ու դարգացման հավանականությունը։

Այսպիսով, քերականական նշանակությունները միայն առաջին հայացքից են նույնական լեզվական համանման նշանակություններին։ Իրականում, չնայած հարաբերական անշարժությանը, դրանք այնուամենայնիվ, պատճառակցում են կառուցվածքային նշանակությունների փոփոխությանը լեզվում։ Կենդանի խոսքը միշտ էլ իր շարժունությամբ և փոփոխականությամբ ընթանում է լեզվի առջևից, ուստի քերականական նշանակությունների փոփոխությունը սկիզբ է առնում ոչ թե լեզվից, այլ բուն խոսքից։ Քերականական նշանակությունները լեզվում և խոսքում երևան են բերում տարբեր աստիճանի կայունություն և հաստատունություն (նույնություն կարող է դիտվել առանձին բառերի միջև, որոնք կատարում են քերականական գործառություններ)։

Լեզվում և խոսքում նշանակությունների միջև եղած տարբերությունները մեծ մասամբ երևան են գալիս բառի մակարդակում։ Բառիմաստը լեզվի համակարգում՝ դա տվյալ բառի բառարանային նշանակությունն է։ Սակայն բառարաններում այսպես կոչված հիմնական նշանակության կողքին նշվում են կոնտեքստուալ կամ լրացուցիչ նշանակություններ։ Ի դեպ, առարկություն է հարուցում բուն հիմնական նշանակություն՝ արտահայտությունը։ Դա կարող է ստեղծել այն պատրանքը, թե լեզվի վերացական համակարգում «աշխատում է» բառի «հիմնական», հաստատուն նշանակությունը (բառի «ուղիղ» նշանակությունը), մինչդեռ խոսքում, տարբեր կոնտեքստներից կախված, երևան են գալիս «անուղղակի» կամ կոնտեքստուալ նշանակություններ։ Ստեղծվում է մոտավորապես այսպիսի պատկեր. որպեսզի բառարանում ամ-

⁴ Նկատի ունենք Ի. Ս. Նարսկու փորձը (տե՛ս И. С. Нарский, Значение в теории познания, в сб. «Проблема знака и значения», М., 1968)։

րագրենք տվյալ բառի նշանակությունը, խոսքի իրական կոնտեքստներից քաղում ենք կոնտեքստուալ նշանակությունները և ներկայացնում որպես լեզվի բառային համակարգում եղած նշանակություններ: Այնուհետև, լեզվի այդ նշանակություններում (բառարաններում ամրագրված) առանձնացվում են բառի «ուղիղ», կոնտեքստից անկախ, նշանակությունը և «անուղղակի», կոնտեքստուալ նշանակությունը: Կարծում ենք, բառի «ուղիղ» և «անուղղակի» նշանակությունների տարբերակումը իմաստ ունի լեզվի մակարդակում, իսկ խոսքում ոչ, «Ուղիղ» և «անուղղակի» նշանակությունների տարբերակումը, ըստ երևույթին, գործողված է տրամաբանության մեջ հայտնի առարկայական և կոննոտատիվ նշանակությունների դասական տարբերակմամբ: Լեզվում, բառերը, շնորհիվ այն բանի, որ ներառում են «ուղիղ» նշանակությունից բացի նաև կոնտեքստուալ նշանակություն, բազմանշանակ են: Մինչդեռ խոսքում, կոնտեքստուալ գործածության մեջ, ընդհակառակը, միանշանակ են, այդ պատճառով միայն իրական կոնտեքստն է որոշում բառերի միանշանակությունը:

Նշանակությունները ճշգրտելիս որոշակի դեր է խաղում նաև բառային կոնտեքստը, այսինքն՝ ճշգրտվող բառի կամ արտահայտության նշանակությանը շրջապատող այլ բառերի կամ արտահայտությունների նշանակությունները: Նշանակություն ունի ոչ միայն արտալեզվական, այլև ներհամակարգային մեկնաբանություն, որն իրացվում է շրջապատող բառիմաստների միջոցով: Այս երևույթը վկայում է լեզվի իմաստային և շարահյուսական տեսանկյունների փոխազդեցության մասին:

Վերը շարադրվածից կարող է ստեղծվել այն տպավորությունը, թե միևնույն բառիմաստի «վարքը» տարբեր է լեզվի վերացական համակարգում և դործով խոսքում: Սակայն լեզվի հասկացությունն այնպիսի վերացարկում է, ինչպիսին հնչույթն է: Լեզուն գործում է ոչ թե խոսքի կողքին, այլ նրա մեջ և նրա միջոցով: Այսինքն՝ լեզվի գործունեության հետ միշտ և ամենուր գործ ունենք միայն կենդանի խոսքում: Սակայն լեզուն մարդկանց գիտակցության մեջ գոյություն ունի որպես իդեալական կաղապար, որի նմանողությամբ ստեղծում ենք իմաստավորված արտահայտություններ: Որպես իմաստագրյալ ման ծրագիր, որպես բառային նշանակությունների կաղմավորման և վերականգնմամբ կանոնների ամբողջություն, լեզուն, այնուամենայնիվ, խոսողի գիտակցության մեջ նախորդում է խոսքին: Լեզվի համար միևնույն է, ո՞ւմ կողմից, ե՞րբ, ի՞նչ հանգամանքներում է իրացվում խոսքային գործունեությունը: Միշտ և ամենուր այն խոսքի կառուցման ծրագիր է: Լեզվի վերացական համակարգի բառային նշանակությունների ամբողջությունից խոսք կառուցելիս՝ հանվում է անհրաժեշտը և վերջինս կոնկրետացվում է խոսքի մեջ դրանցով գործառնելու կանոնների կիրառությամբ: Եվ եթե լեզուն անտարբեր է այն արտաքին պայմանների հանդեպ, որոնցում տեղի է ունենում խոսքը, ապա վերջինս ամենևին էլ անտարբեր չէ արտաքին պայմանների նկատմամբ: Խոսքի մեջ բառիմաստների համար միևնույնը չէ, թե ինչ հանգամանքներում է տեղի ունենում այն: Միայն կոնկրետ գործածության մեջ է բառն օժտվում նշանակությամբ: Նշենք լեզվի և խոսքի որոշ յուրահատկություններ, որոնք պայմանավորում են նշանակության բնույթը լեզվում և խոսքում:

1. Լեզուն իդեալական կանոնավոր համակարգ է, մինչդեռ խոսքում կարելի է դիտել ընդունված նորմերից շեղման միտումներ: Այդ երևույթն է ոչ միայն օտարերկրացու կողմից տվյալ լեզուն գործածելիս, այլև՝ տվյալ լեզվի

5 Այս առիթով կարելի է համաձայնել Մ. Կրամսկու կարծիքին, ըստ որի «ուղիղ կամ հիմնական է երկրորդական նշանակության տարբերակումը կարելի է թույլատրել միայն բառարանում, բառային մակարդակում և միայն դրա երևալու հաճախականությունից կախված: Տվյալ կոնտեքստում չենք կարող խոսել բառի հիմնական կամ երկրորդական նշանակության մասին, բանի որ նշանակությունը՝ գործածված տվյալ կոնտեքստում, հանդիսանում է ուղղակի հիմնական նշանակությունը տվյալ եզակի դեպքում» (J. Kramsky, The Word as a Linguistic Unit, The Hague, Paris, 1969, p. 49):

կանոններին լիովին տիրապետողի գործածությունից: «Իդեալական» լեզվի կանոնավոր ձևերից շեղումները կարող են հիմնավորվել նաև տեսականորեն. չէ՞ որ խոսքը, որպես լեզվի սուբստանցիա, գտնվում է անընդհատ գործողության մեջ, շատ ավելի փոփոխունակ է լեզվի նկատմամբ: Խոսքի կենդանի խոսքում այդ լեզվով խոսողի անհատականությունն անդրադառնում է լեզվի դրություն ունեցող նորմերի վրա: Խոսքում, այսպիսով, դիտվում է լեզվական ձևերի պահպանողականությանը հակասող՝ լեզվական նորմերի խախտման անկասելի միտում⁶, որոնք պարտադիր են այդ լեզվով խոսող լեզվական հանրության բոլոր անդամների համար: Խոսքը կառուցվում է, մի կողմից, ըստ հանրության ընդունած պարտադիր նորմերի, մյուս կողմից այն ձգտում է դուրս գալ այդ նորմերից: Սրանից բխում է լեզվում և խոսքի մեջ քերականական նշանակությունների նույնականության անհնարինությունը:

2. Լեզվին հատուկ է քերականական նշանակությունների ճշգրտություն: Իսկ չի կարելի ասել բառի նշանակության մասին: Այստեղ դիտվում է աղոտություն, անորոշություն, որ կարիք է զգում պարզեցման, ճշգրտման խոսքի մեջ: Ընդհակառակը, խոսքում գիտվում է բառիմաստի միանշանակություն, ճշգրտություն, որը պայմանավորված է կոնտեքստով: Համապատասխանաբար, անորոշությունն ու բազմիմաստությունը լեզվի և ոչ խոսքի, հատկանիշներն են:

3. Նշանակությունը լեզվում կոնտեքստուալ չէ, լեզվում կոնտեքստներ չկան, դրանք գոյություն ունեն լեզվի ակտուալ գործածության, այսինքն՝ խոսքի մեջ⁷: Բառիմաստները լեզվում վերացական են: Հիմնվելով այս փաստի վրա, լեզվաբանական պոզիտիվիզմը դրանք ներկայացնում է իդեալական էությունների տեսքով, որոնք, իբր, գոյություն ունեն լեզվական գործառության կողքին: Սակայն քանի որ խոսքը լեզվի սուբստանցիան է, ապա բառիմաստների կոնտեքստուալությունը իրապես գործածվող լեզվում բացառում է նշանակությունների նման պատկերացումը:

4. Լեզվում գործ ունենք նշանակության և իմաստի հետ, մինչդեռ խոսքում՝ միայն նշանակության հետ: Բառի նշանակությունը լեզվում համընկնում է նրա ղեկնոտատիվ նշանակությանը, որն ուղեկցվում է որոշակի թվով կոննոտատիվ, հնարավոր կոնտեքստուալ նշանակություններով (որոնք, սովորաբար, ընդգրկվում են բառարաններում բառային նշանակության բացատրության մեջ): Խոսքում նշանակությունը հենց այն է, ինչը պայմանավորված է տվյալ կոնկրետ կիրառությամբ և կոնտեքստով:

5. Լեզուն սահմանափակված է վերջավոր թվով բառային կամ ղեկնոտատիվ նշանակություններով: Բառարաններն ընդգրկում են նաև որոշակի թվով իմաստային նշանակություններով բառեր, որոնք ներկայացվում են այսպես կոչված հիմնական կամ ղեկնոտատիվ նշանակության կողքին: Կոնկրետ խոսքային գործունեության մեջ բանն այլ է: Այստեղ բախվում ենք միևնույն բառի հնարավոր կոնտեքստուալ կիրառության անսահմանափակության փաստի հետ, որն իր հետ բերում է լեզվում նշանակությունների անսպառելիություն: Տվյալ կոնկրետ խոսքային գործողության համար դա միակ և վերջավոր կիրառությունն է: Սակայն խոսքային կոնտեքստուալ կիրառություններում բառիմաստները նույնքան անսպառելի են, որքան կոնկրետ խոսքային կոնտեքստները, որոնցում դրանք ձևով են բերում իրենց նշանակությունները:

6. Լեզվում անվան նշանակելի օբյեկտը առարկաների դասն է, մինչդեռ խոսքի մեջ որպես ղեկնոտատներ կարող են հանդես գալ ինչպես առարկաների

⁶ Այդ միտումը կարող է լինել ինչպես գիտակցված, այնպես էլ չգիտակցված (տե՛ս M. Bierwisch, Modern Linguistics. Mouton, The Hague, Paris, 1971, p. 475):

⁷ Ըստ երևութին ճշմարտության ռելյատիվիստական շփազանցություն է կոնտեքստի գերի և նշանակության վերաբերյալ այն միտքը, թե «ոչ մի բառ չունի միևնույն նշանակությունը երկրորդ անգամ» (S. Hayakawa. Language in Thought and Action, New York, 1949, p. 60):

դասը, այնպես էլ անհատ առարկաները՝ կախված կոնկրետ իրադրությունից: ՆՅԵ լեզվում թույլատրելի է բառիմաստի նույնացումը հասկացության հետ, ապա խոսքում դա հնարավոր չէ, այստեղ դիտվում է բառիմաստների հնարավոր դեպքերի առատություն՝ կախված կոնկրետ գործածությունից և կոնտեքստից (ի դեպ, խոսքի մեջ հնարավոր են նաև կիրառություններ, որոնցում չեն նստատի դերում հանդես են գալիս հասկացությունները. հմտ. «Տուր ինձ այդ գիրքը» և «Դիրքը մաքուր բարեկամն է»):

7. Բառիմաստը լեզվում աչքի է ընկնում ձևականությամբ, ինչպես այն բառերը, որոնք կատարում են զուտ քերականական գործառություններ և այդ պատճառով օժտված են վերացական քերականական նշանակությամբ: Ինչպես անհնար է խոսքում կառուցել արտահայտություն առանց լեզվի ձևական տարրերի, նույն կերպ և անհնար է կառուցել խոսքն առանց վերջավոր թվով բառիմաստների ամբողջության: Իրենց արտալեզվական ուղղվածությամբ վերջիններս, անշուշտ, տարբերվում են քերականական ֆունկտորներից, սակայն դրանց ոչ կոնտեքստայնությունը, որ վերացականություն է հաղորդում, մոտեցնում է քերականական ֆունկտորներին: Ուստի, լեզվում բառիմաստների բնույթը թույլ է տալիս նույնացնել դրանք հասկացությունների հետ: Տվյալ դեպքում գործ ունենք նույնացման յուրատեսակ լեզվական վերացարկման հետ, երբ կոնկրետ խոսքային նշանակությունների մասնավոր դեպքերը ձուլվում են կոնցեպտուալ նշանակության հետ: Բառային իմաստը, որպես լեզվական համակարգի անբաժանելի մաս, օժտված է նույնպիսի ձևականությամբ, ինչպես դրանց գործառության կանոնները:

8. Լեզուն չի հաղորդում, այլ ծառայում է հաղորդման կազմակերպմանը: Ընդհակառակը, խոսքը հաղորդում է և հանդիսանում է լեզվի հաղորդակցական հնարավորության կոնկրետ իրացումը: Այս կապակցությամբ լեզվաբանությունն և փիլիսոփայության մեջ կա վիճելի պի հարց. պե՞տք է արդյոք նախադասության նշանակությունը ընդգրկել լեզվի իմաստային կառուցվածքի մեջ: Այս հարցը կարելի է բացատրել երկու կերպ: Նախ, լեզվի հիերարխիկ կառուցվածքի բոլոր տարրերին խոսքում համապատասխանում են դրանց նմանակները: Այս հիմքի վրա լեզվում նախադասությունների առկայության վերաբերյալ տեսակետը օրինական է թվում: Սակայն, մյուս կողմից, այդ տեսակետը հազիվ թե արդարացի: Լեզուն իր կառուցվածքի մեջ է առնում այն տարրերը, որոնք անհրաժեշտ են հաղորդման կազմակերպման համար: Դրանք բառերը և քերականական միջոցներն են՝ բառիմաստներով գործառելու կանոնները: Օրինակա՞ն է արդյոք հաղորդման գործողության ներառումը լեզվի համակարգի մեջ: Կարծում ենք՝ ոչ: Ինքը՝ հաղորդման գործողությունը, նախադասության ձևով պատկանում է ոչ թե լեզվին, այլ խոսքին: Պարզ համեմատությունը կարող է օգտակար լինել այս կոնտեքստում: Ցեմենտը, ավաղը, ամրանը, քարը և անտառանյութը շինարարի նպատակաուղղված աշխատանքին միանալով, կարող են ծառայել որպես շինանյութ՝ տուն կառուցելու համար: Կարելի՞ է ասել, թե տունը ևս շինանյութ է: Շախմատի խաղը ենթադրում է որոշակի քանակությամբ ֆիգուրների քայլերի և կանոնների առկայություն: Կարելի՞ է ասել, թե շախմատի խաղը ներառում է խաղի իրական պրոցեսը: Այնուամենայնիվ, լեզվում գոյություն ունի ինչ-որ բան, որ այլանալովում է խոսքում իրացված նախադասությունը, թեև դրան նույնական չէ: Խոսքում իրացված նախադասությունը, հաղորդման և մյուս գործողությունները, որ կատարվում են նախադասության միջոցով, չէին կարող իրադրվել առանց ծրագրի, լեզվի մեջ՝ նախադասության: Իրացված ասույթը չի կարող պատկանել լեզվին, այն խոսքի փաստ է: Լեզվի մեջ նախադասությունը կարելի է ընդունել որպես պոտենցիա, որպես մտքի ուղղվածությունը առարկային՝ սուբյեկտին հետաքրքրող սլոգությունը: Խոսքի մեջ այդ ուղղվածությունը դրսևորվում է իրացված ձևով՝ որպես հաղորդում, հրաման, խնդրանք, առաջարկ և այլն:

9. Լեզուն չի ազդում մարդկանց վարվելակերպի վրա, մինչդեռ խոսքը

օժտված է այդպիսի հատկությամբ: Այս միտքը կարող է ձևափոխվել հետևյալ կերպ. նշանակությունները լեզվում կարող են շափվել իմաստալիս և շարահյուսական պարամետրերով, մինչդեռ խոսքը շափվում է նաև պրագմատիկական պարամետրով: Եթե նշանակությունը լեզվում դրսևորվում է որպես սուբյեկտի ուղղվածություն դեպի մտքի առարկան, հանդիսանում է սուբյեկտի գործողության ստրատագեմա, ապա խոսքի մեջ այդ ուղղվածությունը ձևոք է բերում լսողի վրա կոնկրետ ներգործության ձև՝ սուբյեկտի այս կամ այն նպատակին համապատասխան: Իհարկե, լեզվում մի շարք բառեր, ինչպիսիք են՝ «լավ», «գեղեցիկ», «անպետք» և այլն, կարող են ուղակիորեն գնահատումներ արտահայտել, սակայն պրագմատիկական նշանակությունը լեզվի մակարդակում դուրկ է կոնկրետ իրական հարաբերակցությունից և կրում է վերացական բնույթ:

10. Լեզուն խոսքային նշանների և դրանցով գործառնու կանոնների վերացական համակարգ է: Լեզուն խոսքային ասույթի կառուցման միջոց է, ուստի նրա համար միևնույն է, թե ի՞նչ նպատակով կգործածվի: Նախադասության նշանակությունը լեզվում որոշակի իմաստով կախված է լեզուն գործածող սուբյեկտի կոնկրետ նպատակից: Նշանակությունը և պրագմատիկական ուղղվածությունը այս կոնտեքստում համընկնում են:

Ռեալիզմի և նոմինալիզմի հակադրությունը լեզվական նշանակության բնույթի մեկնարանման հարցում հիմնվում է լեզվում և խոսքում նշանակությունների նշված հակադրությունների միակողմանի բացարձակացման վրա, որի հետևանքով լեզվական նշանակությունը լեզվաբանական պոզիտիվիզմը հանգեցնում է դրա կոնկրետ, անհատական, իրադրական դրսևորումներին: Մինչդեռ լեզվական նշանակության բնույթի հակադրությունը լեզվի մեջ և խոսքում կարող է հաղթահարվել խոսքի՝ որպես խոսքային գործունեության բովանդակությունների ամբողջության ըմբռնման հիման վրա, որտեղ այդ հակադրությունները միացված են, մի կողմից, լեզվի որպես նշանակության իդեալական կաղապարի և, մյուս կողմից, կոնկրետ, անհատական խոսքի, որպես այդ կաղապարի իրականացման մեջ:

ПРИРОДА ЗНАЧЕНИЯ В ЯЗЫКЕ И РЕЧИ

РОЛАНД АВОЯН

Резюме

Дихотомия язык—речь при философском рассмотрении может служить дополнительным материалом для выявления природы значения в языке. Нельзя сказать, что различия между языком и речью при рассмотрении проблемы значения философами до сих пор не замечены. Однако рассмотрение лексического значения в действии языка приводит лингвистических эмпириков к его номиналистскому толкованию. В качестве примера можно привести теорию «применения» Л. Витгенштейна, оказавшую большое влияние на понимание лингвистическими аналитиками природы значения в языке. Раскрытие и эмпирическое описание ими конкретных разновидностей значения в действии языка—речи зачастую происходит в ущерб его общему и инвариантному пониманию.

Для преодоления лингвистического номинализма, с одной стороны, и лингвистического реализма—с другой, значение в языке и значение в речи должны быть дифференцированы. Методологической основой преодоления односторонности при характеристике значения служит диалектическое понимание соотношения общего (языка) и отдельного (речи). На основе этого соотношения можно выделить некоторые конкретные характеристики природы значения в языке и речи.